ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

(ԼԵՐՄՈՆՏՈՎԻՑ)

Թարգմ. ԱԼԵՔՍԱՆԴՐ ԾԱՏՈՒՐԵԱՆԻ

I

Ահով նայում եմ ես ապագային,
Նայում անցեալիս տխուր, վշտալից.
Եւ իբր յանցաւոր պատժի առաջին,
Շուրջըս որոնում մի սիրտ կարեկից...
Եւ կը գայ արդեօք փրկութեան հրեշտակ,
Որ մեկնէ նա ինձ կոչումը կեանքի,
Ցոյց տայ ինձ կրքի, յուսոյ նպատակ,
Ցայտնի ինձ հզօր կամքը երկնքի—
Թէ ինչու երկինք այսպէս դառնագին
Հարուածեց իմ վառ, յուսալից կեանքին։

Երկրին ես տըւի հարկը երկրային,
Հարկ սիրոյ, յուսոյ, բարւոյ, շարութեան
Եւ պատրաստ անձըս տալ մի այլ կեանքի՝
Լուռ սպասում եմ ցանկալի ժամեան...
Ահա նա հասաւ... բայց ես աշխարհում
Չեմ թողնիլ ոչ մի եղբայր հարազատ,
Ցուրտ ու խաւար է իմ կրծքում տիրում,
Աւաղ, ես արդէն յոգնած եմ, հիւանդ...
Եւ որպէս անհիւթ, վաղաժամ հասած
Մի դժգոյն պտուղ, իմ խղճուկ հոգին
Թօշնել է կեանքի արևից կիզուած՝
Բախտի խուովայոյզ փոթորկի միջին։

24 դեկտեմբերի 1891 թ., Մոսկւա։

II

ՔԵԶ ՄԻ՛ ՀԱՒԱՏԱՐ

(Ազատ Թարգմանութիւն)

Քեզ մի՛ հաւատար, ոսկի՛ ցնորքով ապրող պատանի,
Եւ միշտ երկնչիր ոգեւորութեան վառվռուն բոցից...
Նա կամ երազ է, ծանրը զառանցանք քո հիւանդ սրտի,
Կամ բուռն զայրոյթ՝ ծնուած քո ըստրուկ, կաշկանդուած մոքից.
Եւ մի՛ որոնիր երկնային նշան իզուր նորանում—
Այն քո մէջ առատ եռում են ոյժեր, բորբոքիչ արիւն.
Շտապիր դու շուտով սպառել քո կեանքը դառն հոգսերում,
Վշտի, տանջանքի թոյնով աւերիր դու քո գոյութիւն։

Թէ քեզ պատահի մի նուիրական, հրաշալի ժամին
Բանալ քո սրտում, քո համր սրտում անապակ, մաքուր
Մի անյայտ աղբիւր, ուր պարզ ու անոյշ լուսելիս լինին
Ոգեւորութեան, բաբախող կրծքի ձայներ քաղցրալուր,—
Մի լսիր երբէք, մի՛ հրապուրուիր դու այդ ձայներով,
Եղիր անտարբեր, և նոցա խսպառ տուր մոռացութեան.
Ո՛չ ցուրտ խօսքով, ո՛չ հարթ, համաչափ, կոկուած երգերով,
Հաւատա դու ինձ, նոցա խորհուրդը չես պատմիլ մարդկան։

Թէ յանկարծ գաղտուկ վիշտ կը մերձենայ սրտիդ խորանին,
Թէ խանդն ու կիրքը նորան կը յուզեն ահեղ փոթորկով,—
Մի դուրս գալ երբէք. մարդկանց մեծաղմուկ, ուրախ խնջոյքին
Դու մի՛ մասնակցիլ քո միակ ընկեր—փոթորկուած հոգով.

Քեզ մի՛ սոսրացնիր։ Ամաչիր հոգոյդ զայրոյթը ուժգին,
Կամ համր ու հլու թախիծը կրծքիդ հանել վաճառքի.
Ամաչիր սրտիդ վէրքն ու շարաւը ցոյց տալ ամբոխին,
Եւ հպարտութեամբ վաստակել ցոյցեր նորա զարմանքի։

Մեզ ի՞նչ փոյթ, ասա, թէ դու տանջւել ես, և կամ չես
տանջւած,
Մեզ ի՞նչ փոյթ՝ թէ քեզ անվերջ մաշում է յուզմունք հոգեկան,
Մեզ ի՞նչ՝ գիտենալ անմիտ յոյսերդ անցած, փլշրւած,
Ցեսնել՝ չարաթոյն ցաւակցութիւնդ բանականութեան,
Նայիր քո առջև երգ ու ծիծաղով յառաջ է գնում
Ուրախ ամբոխը՝ բռնած մշտական իւր անշեղ ուղին.
Ջարդ դէմքերին հազիւ է հոգսի հետքը նշմարւում,
Չես տեսնում երբէք անվայել արցունք ոչ ոքի աչքին։

Մինչդեռ հազիւ թէ գտնես գէթ մէկին դու նոցա միջում,
Որ ծանրը վշտից, վաղահաս հոգսից մաշւած չը լինի.
Նոքա բոլորն էլ վաղաժամ ծեր են և ընկճւած կեանքում,
Բոլորն էլ արդէն խմել են թոյնը դառն կորուստի, ծանր յանցանքի.
Հաւատա՛, նոցա ցաւնորք են թւում քո լացն ու տանջանք,
Եւ ծաղրելի ես դու նոցա աչքում քո վարժ երգերով,
Որպէս երեսը ներկերով նաշխած մի քաջ ողբերգակ,
Որ բեմի վերայ օդն է սղոցում իւր թղթէ սրտով...

28 դեկտեմբերի 1891 թ., Մոսկւա։

III

Երբ վերջին հրաժեշտ ես երկրին տալիս,
Այստեղ, մարդկանցում կը թողնեմ միայն
Լոկ յիշողութիւն մոլար կրքերիս,
Փոխանակ շքեղ, փառաւոր անուան։

Երբ ցուրտ հողի տակ կը նիրհէ հանդիսաւ
Այն սիրտը, ուր ջերմ արիւնն էր եռում,
Ուր այնպէս իզուր, ուր այնպէս անմի՛տ
Սէրն ու թշնամանք կուիւ էին մղում։

Երբ հասարակաց վճռով մեղապարտ,
Դու գլուխ խոնարհած՝ կը լռես իսպառ,
Եւ՝ անմեղ քո սէրն, այդ սէրն անարատ
Ամօթ, նախատինք կլինի քեզ համար,—

Նա, ով կրքերով ու արատներով
Քո պայծառ կեանքը մատնեց խաւարին,
Օ՛, աղերսում եմ, կծու խօսքերով
Նորան մի՛ յիշիր այդ տխուր ժամին։

Բայց երբ ամբոխը քեզ կոչէ արեան,
Ասա, մեզ դատող կայ մի այլ էակ,
Որից գնել ես յանցանքիս ներման
Սուրբ իրաւունքը՝ կրելով տանջանք։

7 յունուարի 1892 թ., Մոսկուա։

IV

Ո՛չ. ես չեմ ուզում, որ խորհրդաւոր
Իմ կեանքի վէպը յայտնուի աշխարհին.
Տէրն ու խիղճս են միայն դատաւոր
Ե՛ւ իմ վառ սիրոյն, և՛ իմ տանջանքին։

Եւ նոցա առջև սիրուս կը բացուի,
Ցուսալով նոցա ջերմ կարեկցութեան.
Եւ թող նա միայն, թող նա ինձ պատժի,
Ով վերաս դրաւ տանջանքի շղթան։

Մարդկանց անարգանք, մարդկանց նախատինք
Անզօր են վսեմ հոգին վրդովել.
Թող գոռայ ծովի կատաղած ալիք—
Անզօր է կանգուն ժայռը կործանել։

Նորա ճակատն է ամպերի մէջին—
Մռայլ բնակիչ երկու տարերքի.
Եւ միայն ահեղ որոտ, փոթորկին
Պատմում է նա միշտ խորհուրդը մռքի։

20 դեկտեմբերի 1891 թ., Մոսկուա։